



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 4 ՄԱՐՏ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՏՈՍ 8

ԱՍՏՈՒԾՈՅՑ ՓԱՌՔԸ ԵՒ ՄԱՐԴՈՒՆ ՏՐՈՒԱԾ ՊԱՏԻԷԸ

**Ո՛վ Տէր, մեր Տէրը, ինչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:**  
Փառիդ աւելի բարձր է՝ քան երկինքը.  
բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով  
գովեստդ հիւսեցիր թեզի հակառակողներուն դիմաց,  
որպէսզի լոռութեան մատնես թշնամիներդ եւ հակառակողներդ:  
Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը,  
կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր,  
կը մտածեմ.- Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն,  
մարդ արարածը ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց կու տաս անոր:  
Զայն ինչ մը վար դասեցիր թեզմէ,  
փառով ու պատուով զայն պսակեցիր.  
Ինչ բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն,  
անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ,  
հօտերն ու արջառները, նաեւ բոլոր վայրի անասունները,  
երկինքի թռչուններն ու ծովուն ձուկերը,  
եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները:  
**Ո՛վ Տէր, մեր Տէրը, ինչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:**

### ՇԱՐԱԿԱՆ ԱՐԹԵ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,**  
**Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

### ԱՐԹԵ

Տէր Ամենակալ,  
քու իմաստութիւնդ որկէ քու սուրբ երկինքդ,  
քու փառքի աթոռդ, որպէսզի զայ եւ մեր մէջ հանգչի,  
եւ գիտնանք թէ ինչ կը կամենաս:  
Օրովհետեւ, ո՛վ կրնայ Աստուծոյ խորհուրդները գիտնալ,  
կամ ո՛վ կրնայ Տիրոջ կամքը հասնկալ:  
Մահկանացուներուս դարումները խախտուի եւ  
եւ մեր միտքը կը մոլորի յաճախ:  
Ուստի, Կուր մեզի իմաստութիւնը, որպէսզի կամքիդ համաձայն ապրինք: Ամէն:

### ԱՐԹԵ

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
**աջ եւ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,**  
**ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,**  
**ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.**  
**եւ ողորմեա՛ ինչ արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

# ՕՐՈՒԿԱՆ ՆԻԻԹԸ

ԾՆՆԴՈՑ 2:16-25



**Աստուած պատուիրեց մարդուն ըսելով. «Պարտէզին բոլոր ծառերէն համարձակ կեր, բայց բարիի ու չարի գիպտութեան ծառէն մի՛ ուրեր. քանզի այն օրը որ անկէ ուրես, անշուշտ պիտի մեռնիս»:** Փորձառութիւնը ինքնին անհնազանդութիւն չէր, բայց վերածուեցաւ անհնազանդութեան, որովհետեւ զինք Աստուծոյ խօսքէն եւ հրամաններէն դուրս պիտի բերէր եւ պարճառ պիտի ըլլար մահուան:

Ներսէս Ընորհալի կ'ըսէ, թէ Դրախտին մէջ գտնուող ծառը սովորական էր, երբ մարդը անկէ ճաշակեց անհնազանդութեան ոգիով մահուան պարճառ դարձաւ: Այսպէս կարելի է առնել, երբ որեւէ պրոպետ Կ'ուզենք ճաշակել ժամանակէն առաջ, ան կրնայ անհանգստութիւն պարճառել: Աստուած երկու սկզբունք տուաւ մարդուն՝ կամ Իր կամքին համաձայն ապրելու, կամ ալ՝ հակառակ, եւ ուստի մարդուն վերաբերումն էր, որ պարճառ դարձաւ անոր անկման, առանց համբերելու եւ հնազանդելու:

Աստուած ճիշդ է մարդուն ազատութիւն տուաւ, բայց նաեւ անոր կեանքին ուղին ճշդելու համար օրէնքներ սահմանեց, առանց սակայն սահմանափակելու անոր ազատութիւնը: Պէտք է գոյշ ըլլալ, որ ազատութիւնը երկսայրի սուր է, թէն ամենէն գեղեցիկ բանն է, բայց նաեւ չարիքի պարճառ կրնայ դառնալ, որովհետեւ ազատութիւն կը նշանակէ ընտրութիւն: Ազատութեամբ ընտրել կամ բարին կամ չարը:

Որովհետեւ մարդը փորձառութեամբ սորվող արարած մըն է, հետեւաբար սկիզբէն չի ճանչնար բարին եւ չարը: Ուստի երբ Աստուած պատուիրեց մարդուն չմօտեանալ ծառին, որովհետեւ անիկա դէպի մահ կ'առաջնորդէ, եւ սակայն մարդը ուզեց փորձառութեամբ սորվիլ, եւ ենթարկուեցաւ մահուան: Աստուած ֆիզիքական մահ սահմանեց մարդուն, սակայն մարդը անմիջապէս չմեռաւ, այլ դարձաւ մահկանացու: Թեպէտ Աստուած թոյլատրեց անոր ֆիզիքական մահը, բայց չուզեց անոր հոգեկան մահը, որովհետեւ մեղքը նաեւ հոգեկան մահուան կ'առաջնորդէ, որովհետեւ մարդուն սրտէջեց պահելու համար:

Ուրեմն մարդը ունի մահկանացու մարմին եւ անմահ ոգի մը: Միայն ֆիզիքական մահուամբ է որ անոնք իրարմէ կը բաժնուին, բայց Աստուծոյ կամքն է, որ դարձեալ մարդը ըլլայ միշտ իր սրտէջածին պէս: Այդ մէկը փրկի պիտի ունենայ ասարտին:

**Գազաններն ու երկինքի բոլոր թռչունները հողէն շինեց եւ Ադամին առջեւ բերաւ, որպէս զի տեսնէ թէ անոնց ինչ անուն պիտի դնէ:** Այս հատուածը կ'ուզէ ըսել, որ Աստուած բոլոր անասունները Ադամի տրամադրութեան տակ դրաւ: Միւս կողմէ բանի մը անունը տալ կը նշանակէ իշխանութիւն ունենալ անոր վրայ:

**Աղէկ չէ որ Ադամ միմտակ մնայ. անոր օգնական մը ընեմ իրեն յարմար: Տէր Աստուած խորունկ քուն մը բերաւ Ադամին վրայ ու անիկա քնացաւ:** Անոր կողին ոսկորէն մէկը առաւ ու անոր փրկը միս լեցուց: Ինչպէս կենդանիներու պարագային, այնպէս ալ մարդու պարագային իր տեսակին պէս, որպէս իրեն օգնական: Խորունկ քուն մը բերաւ, որ կը նշանակէ խորհուրդ մըն է ամբողջ սրտէջագործութիւնը, առաւել եւս մարդու սրտէջագործութիւնը: Միւս կողմէ, Աստուծոյ կողմէ է որ կը տրուի, եւ ոչ թէ մարդուն կողմէ կը խնդրուի: Տակաւին, կայ այն ապագայ պարկերացումը, ինչպէս որ Ադամի կողէն կինը պիտի սրտէջուէր, նոյնպէս ալ Քրիստոսի կողէն Եկեղեցին:

Կողի ոսկորէն բացաբարութիւնը ցոյց կու տայ անոնց հաւասարութիւնը, միեւնոյն ժամանակ կողը, սրտին, կուրծքին մօտիկ մաս մը, որ կը նշանակէ մարդուն սրտակից, կողակից. մէկը որ կրնայ հասկնալ, հաղորդակից ու բաժնէկից դառնալ Ադամին զգացումներուն, մտածումներուն, հոգեմտաբար ներաշխարհին:

**Ադամ ըսաւ. «Անիկա ոսկորէս ոսկոր ու մարմինէս մարմին է. ասիկա Կին կոչուի, քանզի իր այրէն առնուեցաւ»:** Կը նշանակէ ազգակից, հարազատ: (Ծննդ 29:14): **Անոր համար այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միմտայ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան:** Հետաքրքրական է, որ փակաւին հայր ու մայր գոյութիւն չունին, բայց արդէն իսկ արտայայտութիւնը կայ: Այս արտայայտութիւնը նկատի ունի ապագայ իրողութիւն մը: Այս պարագային կը նշանակէ նոր ընտանիքի մը կազմութեան մասին է խօսքը: Որովհետեւ այնքան արեւն որ ամուսնացած չէ, կը նշանակէ հոր ընտանիքին մաս կը կազմէ, իսկ երբ ամուսնանայ նոր ընտանիք է որ կազմուի: Մէկ մարմին պիտի ըլլան կը նշանակէ համերաշխ, ներդաշնակ եւ համագործակից իրարու: Իսկ հոն ուր որ երկուութիւն կայ, կը նշանակէ հոն բաժանում կայ, իսկ հոն ուր բաժանում կայ հոն արդէն կործանում է որ կը փրկէ: Իսկ այս արտայայտութիւնը արդէն Աստուծոյ կամքն է որ կը յայտնէ, որպէս ընտանիքը այս երկրի վրայ դաստիարակութեան եւ պարտապարտութեան հանգրուան մըն է Աստուծոյ ընտանիքին մաս կազմելու:

**Ադամ ու իր կինը երկուքն ալ մերկ էին ու չէին ամչնար:** Նախ պէտք է ճշդել, որ 2-րդ եւ 3-րդ գլուխներուն մէջ յիշուած մերկ կամ մերկութիւն բառերը փարբեր իմաստներ ունին:

Այսպէս յիշուած մերկութիւնը մարմնական մերկութեան մասին է: Աստուած մարդս սրտէջեց, եւ մարդը այդպէս ալ կը ծնի մերկ: Ամօթը սակայն մերկութեան հետ ի՛նչ կապ ունի, եւ ինչո՞ւ ամօթ չէին զգար: Մարմնական մերկութիւնը այսօր ամօթի պարճառ է՝ թէ ո՛չ:

Աստուած երբ մարդը սրտէջեց, սրտէջեց ամբողջ բարութեամբ: Նաեւ մարդը ծածկուած էր աստուածային փառքով: Այս փառքը երբոր կորսնցուց մերկութեան ամօթը սկսաւ զգալ: Ուրեմն, մարդուն մերկութեան մէջ ամչնալիք բան մը չկայ: Մարդը իր մարմինը պէտք է գնահատէ իրրեւ աստուածային բարիք: Մարդուն մարմին մէջ երբեք ալ չկար ամօթի գաղափարը: Որքան արեւն որ չարը գոյութիւն չունէր մարդուն մէջ, նաեւ այր եւ կնոջ յարաբերութեան մէջ, այնքան արեւն ամօթի խնդիր չկար: Այսօր եթէ երբեք կ'ամչնանք, որոհետեւ փոխուած է մեր հայեացքը: Հետեւաբար, մարմնի մերկութիւնը չէ ամօթի պարճառը, այլ՝ մտածողութիւնը: